և մտին ի ժամ և ծանուցին ժողովրդեանն թէ Այդ չունքդ այդպէս արարեալ մեզ և ասեն առ մեզ թէ Գնացէ՛ք տաճկացիք և փրկիք ի ձեռաց մեր։ Եւ ժողովուրդքն ի վեր առեալ զձայնս իւրեանց բազում բան ասացեալ նոցա, հայհոյեալ և անարգեալ զնոսայ։

Կիրակի օրս (9 Նոյ.) կրկին մարդ կու ժողովէին թէ Նստինք և պարտք հոգանք, զի մեք զխաղաղութիւն խնդրեմք։

Օրս զմուֆտին փոխեցին և եդին ի տեղի Նորա զՊալիզատէն։

Գչի օրս (11 Նոյ.) եկն էլչի և դեսպան Պարսից արքայէն առ Թագաւորն և եմուտ ի քաղաքս և ունէր փիլ մի ընդ իւր ընծայ եւ այլքն ի ծածուկ, և գնաց ի սարայ Սալիհ փաշային։

Ուրբաթ օրս (14 Նոյ.) եմուտ դեսպանն առ վէզիրն և ետ զընծայսն նորա, և վէզիրն մինչև տասն արանց կապայ ազուցեալ խիլայելով զնոսա և արձակեաց։

Երեկոյիս աւուր Եչի գնացեալ եղեն չարքն մեր եկեղեցւոյ առ Յոհան Բարսեղն Արևելցի որ եկն ընդ դեսպանին Պարսից, և հարցանեն ընդ նա բան ինչ վասն բազում չարութեան։ Եւ օրս վէզիրն զՅոհան Ռուհիճանն թային (ՀԷԿ ԳՈՂ ԿԲՈՒԱԾ)։ Եւ Ուրբաթի օրս ժողովին, որք առաջակայքն[1]) էին ի ժամանակ Մուղնեցոյն, առ Բարսեղն վասն թղթի։ Եւ նա տեալ թուղթ նոցա Է, երկուքն Տաւուտին և Յանճուն, և մինն Հարազատին իմոյ բանադրանք, և մինն՝ Ցարութիւն Չելէպուն, և երկուքն՝ քահանայից և իշխանաց քաղաքիս, ի վերայ նոցին այսպէս գրեալ։ Եւ եկեալքն ի Դ եկեղեցոյն էին մի մի մարդ, որպէս օրէն է, և Աստուածածնէ ոչ էին եկեալ, և ի մեր եկեղեցոյն Դ մարդ

1) առաջի կարքն.